ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2025թ. փետրվարի 12-ին կնքված N ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/7 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

«01» «10» 2025թ.

ք. Երևան

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Ա. Աղաբաբյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Մեգնա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուբեն Դարբինյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթներով և հիմք ընդունելով Կողմերի միջև 12.02.2025թ. կնքված N ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/7 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը, Ծառայության նյութատեխնիկական վարչության կողմից Պայմանագրի առավելագույն պայմանագրային գինը տաս տոկոսով ավելացնելու վերաբերյալ 22.09.2025թ. թիվ Ներքին/ԱԱ/79118-2025 զեկուցագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1.1 Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 4510000 (չորս միլիոն հինգ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդ որում,

1-ին չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 2200000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ

2-րդ չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 2310000 (երկու միլիոն երեք հարյուր տաս հազար) ՀՀ դրամ:

1.2 Պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ընդհանուր գինը սահմանող 5-րդ սյունակում «2000000» թիվը փոխարինել «2200000» թվով, «2100000» թիվը փոխարինել «2310000» թվով:

1.3 Պայմանագրով հաստատված վճարման ժամանակացույցը (հավելված թիվ 2) հաստատել նոր խմբագրմամբ ըստ համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների կատարման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	«Մեգնա» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 13	Հասցե՝ ՀՀ, Երևան, Աճառյան 42
ՀՎՀՀ 02505511	Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հ/հ՝ 2481000888680077
Հ/Հ 900011556355	ՀՎՀՀ՝ 00083019
	Գործադիր տնօրեն՝ Ռուբեն Դարբինյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 1
« 12 » «փետրվարի» 2025թ. Կնքված
N ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/7 գնման պայմանագրի հիման վրա
« 01 » « 10 » 2025թ. Կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*ԸՆԴԱՄԵՆԸ*
1	50111130/6	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	400,000	400,000	400,000	900,000	900,000	900,000	1,400,000	1,400,000	1,400,000	2200000	2200000	2200000	2200000
2	50111130/7	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	420,000	420,000	420,000	945,000	945,000	945,000	1,470,000	1,470,000	1,470,000	2310000	2310000	2310000	2310000

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Միասնական սոցիալական ծառայություն
Ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեգնա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Երևան, Աճառյան 42
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
հ/հ՝ 2481000888680077
ՀՎՀՀ՝ 00083019
Գործադիր տնօրեն՝ Ռուբեն Դարբինյան

(ստորագրություն)
Կ.Տ.